ցին այժմ գիւղերում ոչ մի առանձին ծէս չի կատարւում, և ոչ մի երգ չի երգւում, ինչպէս որ եղել է հնումը։ Վերջապէս զուռնան հնչում է պսակ տանելու եղանակը և ահա սեղեակից դուրս են բերում նորահարսին, ուր նորափեսան խաչեղբայրով և ազգականներով սպասում է. ապա շարւում են միմեանց ետևից, նախ զուռնաչին և թմբկահարը, նրանց հետևում է մի գծի վրայ հարսը, փեսան և աջ կողքից խաչեղբայրը. սրանց ետևից խուռն հասարակութիւնը և կողքերից ձիաւոր ջահիլները՝ դիմում են եկեղեցի։ Հէնց որ հասնում են եկեղեցու դուռը, զուռնան իսկոյն կտրում է իր ձայնը մինչև հարս ու փեսայի եկեղեցուց դուրս գալը։ Եկեղեցում քահանան խոստովանեցնում է հարս ու թագաւորին, ձեռք ձեռքի տալիս և ապա գլուխ գլխի դրած՝ պսակում. խաչեղբայրն էլ խաչը դնում է սրանց գլուխներին։ Պսակից յետոյ, երբ հարսն ու փեսան եկեղեցուց դուրս են գալիս, ջահիլներն սկսում են հրացաններ արձակել, սուր, ձի խաղացնել. ապա բոլորն նոյն կարգով, տեղական սովորութեան համաձայն, շարականներ կարդալով գնում են հարսի տունը, ուր ճաշ են տալիս հասարակութեանը, որից յետոյ մէջտեղ են բերում մի ոչխար, որի գլուխը թագաւորը թուրի մի հարւածով պիտի կտրի։ Ապա նորից «ծաղիկ» (փող) են հաւաքում և մօտ չորս ժամ քէֆ անելուց յետոյ թագաւորին վերցնում և գնում են նրա տունը, ուր մինչև երեկոյ ուրախութիւն են անում և ապա ընթրում։ Այնուհետև մօտ 20 հոգի թագաւորին տանում են հարսի տունը, ուր թագաւորին զանազան հարցեր են տալիս. —

—Սարդարիդ ով է կարել. թագաւորը չի պատասխանում, մինչև որ զոքանչից փող չի ստանում. ապա հարց է տալիս աները. թագաւորը դարձեալ չի խօսում. աները 5 զուան փող է նւիրում, դրա վրայ թագաւորը խօսում է։ Այնուհետև սկսում են քէֆ անել, պարել մինչև առաւօտ։

Առաւօտեան հարսի հայրը մի գլուխ շաքար և երեք թուման փող մի մատուցարանի մէջ պատրաստում և նւէր